# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<03.02.2026թ>> ք. Երևան

Սույն թվականի փետրվարի 3-ին, ժամը 11:00-ին ՀՀ ք. Երևան Էրեբունի վարչական շրջանի վարչական ղեկավարի նստավայրում /ք. Երևան Սասունցի Դավթի փող., 87 շենք/ տեղի ունեցավ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /03.05.2024թ. ՀՕ-150-Ն/ և ՀՀ կառավարության 2023թ դեկտեմբերի 28-ի <<Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին>> N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Դավիթ Բեկի փողոց 54/12-54/9 հասցեում վառելանյութի լիցքավորման կայանի կառուցման նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային քննարկումը:

**Ելույթ ունեցան՝**

**Վ. Հարությունյան**

Ողջունեց հանրային քննարկումների մասնակիցներին և հայտարարեց հանրային քննարկումները բացված: Ներկայացրեց փորձաքննական գործընթացը. Նշեց, որ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակվել է համապատասխան Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին օրենքի պահանջների: Նշվեց, որ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հատը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվել է կարծիքի՝ Շրջակա միջավայրի համապատասխան ստորաբաժանումներ և այլ գերատեսչություններ, որից հետո Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը ներկայացվել է ձեռնարկողին լրամշակումներ իրականացնելու համար: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը լրամշակվել է՝ հաշվի առնելով ներկայացված դիտողությունները և առաջարկությունները:

**Գ. Պողոսյան**

Ներկայացրեց հեղուկ վառելիքի կայանի կառուցման աշխատանքային նախագիծը, նշեց նախատեսվող գործունեության տեխնիկա-տնտեսական ցուցանիշները և ինժեներական լուծումները:

Հանրային քննարկումների ընթացքում տեղի ունեցավ նաև մտքերի փոխանակում, բարձրացվեցին հարցեր շինաշխատանքների կազմակերպման, տարածքի մոտեցումների, տարածքում հնարավոր ծառահատումների, շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների, նախատեսվող բնապահպանական միջոցառումների վերաբերյալ և այլն, որոնց վերաբերյալ կողմերը տվեցին սպառիչ պատասխաններ:

Նախաձեռնողի ներկայացուցիչ՝ Գ. Պողոսյան

Փորձագետ՝ Վ. Հարությունյան